# ՀԱՄԱՏԵՂ ԵՐԹ

Մարտի 3-ին Վրաստանի ազգային երիտասարդական խորհրդի և Թբիլիսիի «Նոր սերունդ» հայկական երիտասարդական կազմակերպության նախաձեռնությամբ կազմակերպվեց խաղաղասիրական և ազգամիջյան բարեկամության յուրօրինակ մի ձեռնարկում, որն անմիջականորեն կապվում է վերջին ժամանակներս Թբիլիսիի Լեսելիձե փողոցի վրա գտնվող Նորաշեն եկեղեցու շուրջ ծավալվող իրադարձությունների հետ: Երթի նպատակն էր՝ մեկ անգամ ևս փաստել, որ հայերն ու վրացիները, հատկապես երիտասարդներն իրարից տարանջատվելու ոչ մի բան չունեն:

Շուրջ հարյուր հոգու հասնող խումբը մոմավառություններով զուգորդվող իր երթը սկսեց Թբիլիսիի Սիոնի վրացական եկեղեցուց, ապա անցավ Նորաշեն, որից հետո՝ առաջնորդանիստ Սուրբ Գևորգ եկեղեցի: Այստեղ նրանց դիմավորեց Վիրահայոց թեմի փոխառաջնորդ Տ. Աբգար աբեղա Հովակիմյանը, հույս հայտնելով հարցի շուտափույթ և բարենպաստ լուծման համար: Հայր Սուրբն այնուհետև օրվա հետ կապված աղոթք կարդաց և օրհնեց երիտասարդներին:

***Դատական ակնարկ:*** 15-րդ դարի կառույց Նորաշենում, որն այժմ գործող եկեղեցի չէ, ո՛չ վրացական և ո՛չ էլ հայկական ժամերգություն ու Ս. Պատարագ չի մատուցվում: 1994-1995 թվականներին որոշ անձիք, ցավոք սրտի, ուղղափառ Եկեղեցու ներկայացուցիչներ, ներխուժեցին եկեղեցի և ոչնչացրեցին ու քանդեցին տեղի պատմական քանդակներն ու սրբապատկերները, այդ թվում վնասեցին և Հովնաթանյանի բիբլիական թեմաներով ստեղծած որմնանկարները, որոնցով զարդարված է ողջ եկեղեցին: Այն ժամանակ Վրաստանի հայերի միությունը դիմեց Վրաց Պատրիարք Իլիա Բ-ին և Նորին Սրբություն Գարեգին Ա-ին, որոնց համատեղ ուժերով էլ վանդալիզմը կանխվեց, բայց Վրաստանի այդ ժամանակվա քաղաքական պայմաններում հարցը չլուծվեց, ուստի որոշվեց հետաձգել քննարկումը՝ մինչև երկրում վերջնական կայունության հաստատումը:

Կայացավ բանավոր համաձայնություն, ըստ որի՝ եկեղեցին պիտի ժամանակավորապես փակվեր: Եվ սակայն վերջերս Նորաշենի եկեղեցու բակում, այստեղ արդեն դարեր շարունակ եղած հայկական խաչքարերի ու տապանաքարերի կողքին, հայտնվեցին վրաց մակագրություններով տապանաքարեր ու շիրմաքարեր, որոնք փաստելու էին եկեղեցու վրացական ծագումը: Պարզվեց նաև, որ ինքնակամ այս քայլն արվել էր Նորաշենից 20-25 մետր հեռավորությամբ գտնվող Ծմինդա Ջվարի (Սուրբ Խաչ) վրացական եկեղեցու սպասավոր ոմն Հայր Տարիելի կողմից, ում նախաձեռնությամբ էլ եկեղեցու բակում ամեն օր մի խումբ վրացի հավատացյալներ սկսեցին մոմեր վառել, հավանաբար, ի նշան բողոքի և Նորաշենի «վերադարձման»: Այս ամենին հաջորդեց վերջերս Վրաստանի «Ռուսթավի-2» հեռուստաընկերության «Կուրիեր» լրատվական ծրագրով հնչած քսիանայի անպատշաճ մեկնաբանությունը. «Թե ցանկանում են եկեղեցի ունենալ, ապա թող կառուցեն այն սեփական երկրում»:

Պետք է ասել, որ Նորաշենի խնդիրը մեծ արձագանք է ստացել և մինչ օրս լուսաբանվում է Վրաստանի լրատվամիջոցներով և արդեն վրացի քահանայի այս խոսքերին բացասական գնահատական է տրվում այն պարզ պատճառով, որ նման բարձր մակարդակի հարցերն այդպես չեն լուծվում և ենթակա են Մայր Աթոռի և Վրաց Պատրիարքարանի ղեկավար մարմինների լուծմանն ու որոշմանը:

Ավելացնենք, որ Վիրահայոց Առաջնորդարանին հուզող հարցերով ու նաև Նորաշենի առնչությամբ, որը և անհարկի ստվեր է գցում հայ ու վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության վրա, թեմի առաջնորդը դիմել է Վրաստանի նախագահ Միխայիլ Սաակաշվիլուն:

Նորաշենի հետ կապված հարցերի կարգավորման խնդրով երկրի նախագահին ու Վրաց Պատրիարքին, Ամենայն Հայոց Կաթողիկոսին են դիմել նաև Վրաստանի հայերի միությունը և համայնքային այլ կառույցներ:

*ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ*